ՁԵ N3

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 29
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

Երևան քաղաքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և/կամ գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 54-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
01-008-0405-0099 կադաստրային ծածկագրով 0.635566 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների հողեր	01-008-0405-0099 կադաստրային ծածկագրով 0.635566 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Հայտնում ենք, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն գործի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի՝ պայմանով, որ կապահովվի «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի գրությամբ ներկայացրած պահանջն, ըստ որի նշված հասցեում գտնվող հողամասի եզրագծով անցնում է միջին ճնշման Դ-57 մմ տրամագծի վերգետնյա գազատար:Կառուցապատման աշխատանքներ իրականացնելիս անհրաժշտ է ապահովել գազատարի պատշաճ շահագործումն ու սպասարկումը կամ սեփական միջոցներով իրականացնել գործող գազատարի վերատեղադրում /գծապատկերը կցվում է/:

4. Հայտնում ենք նաև, որ հողամասում առկա են «Տելեկոմ Արմենիա» և «ՅՈՒՔՈՄ» ՓԲ ընկերություններին պատկանող կոմունիկացիաներ: Շինարարական աշխատանքներ իրականացնելիս անհրաժեշտ է ապահովել վերոնշյալ կոմունիկացիաների անխոչընդոտ շահագործումը /ընկերություններին պատկանող կոմունիկացիաների տեղակայման սխեմաները կցվում են/:

5. Երևանի քաղաքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Երևան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա. Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, « 1 » « փետրվարի » 2022թ.